



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

АГЕНТСТВО ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ СОБСТВЕННОСТИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱԳԻՐ

ОФИЦИАЛЬНЫЙ
БЮЛЛЕТЕНЬ

№ 06/2

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ПРОМЫШЛЕННАЯ СОБСТВЕННОСТЬ

Սույն տեղեկագրում
գետեղված տեղեկությունները
համարվում են հրապարակված 2017 թվականի հունիսի 16-ից

ԳՅՈՒՏԵՐ	4, 104
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	6, 106
ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ	8, 108
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	10, 110
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ	11, 111
<i>Տեղեկություններ գրանցված արդյունաբերական նմուշների մասին</i>	13, 113
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	14
<i>Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին</i>	16
<i>Տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման մասին</i>	65
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՀԱՅՏԵՐ	68
<i>Տեղեկություններ ապրանքային և սպասարկման նշանների հայտերի մասին</i>	70
ՑՈՒՑԻՉՆԵՐ	99
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	101
ԵՐԿՏԱՌ ԿՈԴԵՐԸ	114

Հրատարակվում է Մտավոր սեփականության
գործակալության կողմից 1995թ.

Երևան 0010, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 3
Հեռ. (011) 597-537 հայտերի ընդունման բաժին
Հեռ. (011) 597-535 տեղեկատվական-
տեխնոլոգիական ապահովման բաժին

Издается Агентством интеллектуальной
собственности с 1995г.

Ереван, 0010, Площадь Республики,
Правительственный дом, 3
Тел. (374 11) 597-537 отдел приема заявок
Тел. (374 11) 597-535 отдел информационно-
технологического обеспечения

СОДЕРЖАНИЕ

ИЗОБРЕТЕНИЯ.....	4, 104
Сведения о выданных патентах.....	6, 106
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ.....	8, 108
Сведения о выданных патентах.....	10, 110
ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ.....	11, 111
Сведения о зарегистрированных промышленных образцах.....	13, 113
ТОВАРНЫЕ ЗНАКИ.....	14
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	16
Сведения о продлении действия регистрации товарных знаков.....	65
ЗАЯВКИ НА ТОВАРНЫЕ ЗНАКИ	68
Сведения о заявках товарных знаках и знаках обслуживания.....	70
УКАЗАТЕЛИ.....	99
СООБЩЕНИЯ.....	101
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ.....	114

CONTENTS

INVENTIONS.....	4, 104
Information on granted patents.....	6, 106
UTILITY MODELS.....	8, 108
Information on granted patents.....	10, 110
INDUSTRIAL DESIGNS.....	11, 111
Information on registered industrial designs.....	13, 113
TRADE MARKS.....	14
Information on registered trade marks and service marks	16
Information on renewal of effect of trademark registration	65
TRADEMARK APPLICATIONS	68
Information on trademarks and service marks applications	70
INDEXES.....	99
REPORTS.....	101
TWO-LETTER CODES.....	114

ԳՅՈՒՏԵՐ

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների
նույնականացման միջազգային կոդերը
ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի**

11	արտոնագրի համարը
13	փաստաթղթի տեսակի կոդը A գյուտի արտոնագիր B արտոնագրաունակության մասին եզրակացություն
21	հայտի համարը
22	հայտի ներկայացման թվականը
23	ցուցահանդեսային առաջնության թվականը
31	առաջին հայտի համարը
32	առաջին հայտի ներկայացման թվականը
33	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
45	գյուտի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը
51	միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
54	գյուտի անվանումը
56	տեղեկատվության աղբյուրներ
57	գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը
62	ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
72	գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը
73	արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74	արտոնագրային հավատարմատար
85	միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը
86	միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը
87	միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) **2017.01** (11) **3107** (13) **A**
A23 G3/00

(21) **AM20170034** (22) **13.03.2017**

(72) Կարեն Խաչիկյան (AM)

(73) Կարեն Խաչիկյան, 0063, Երևան, Խուղյակովի 47/1 (AM)

(54) **Մրգային շոկոլադապատ կոնֆետ**

(57) Գյուտը վերաբերում է սննդի արդյունաբերությանը, մասնավորապես՝ հրուշակեղենի արտադրման բնագավառին:

Շոկոլադապատ կոնֆետում որպես իրան վերցված է հունական կանաչ ընկույզի մուրաբայի կիսած, մասնակիորեն չորացրած, դեղձի բուրավետ սպիրտ ներծծած պտուղը, որը լցոնված է 18-19% կտավատի քուսպ, 19.98-21% բուսական յուղ, 59.98-62% կանաչ ընկույզի մուրաբայի օշարակ և 0.02% դեղձի 65° թնդության բուրավետ սպիրտ պարունակող լցոնով:

Արդյունքում ստացվում է նոր յուրահատուկ տեսակի, կտավատի քուսպի օգտագործմամբ պայմանավորված ֆունկցիոնալ նշանակություն ունեցող դեղձի բույրով մթերք, որն ընդլայնում է կոնֆետների տեսականին:

(51) **2017.01** (11) **3108** (13) **A**
B23B 1/00

(21) **AM20170001** (22) **25.01.2017**

(72) Բորիս Սերգեյի Բալասանյան (AM), Արմեն Արշակյան (AM), Ալեքսանդր Ղարայան (AM), Արամ Բալասանյան (AM), Հովհաննես Չիբուխյան (AM), Բորիս Արմենի Բալասանյան (AM), Վարդուշ Գրիգորյան (AM)

(73) «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ, 0009, Երևան, Տերյան 105 (AM)

(54) **Սայրային գործիքով թրթռակտրման օպտիմալ պարամետրերի որոշման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է մետաղամշակմանը, մասնավորապես՝ սայրային կտրող գործիքով մետաղների թրթռակտրման եղանակներին:

Ըստ եղանակի, մշակող համակարգի կտրման կայունացված պայմաններում չափում են երեք փոխուղահայաց առանցքներով՝

X, Y, Z կտրման արդյունարար ուժի երեք բաղադրիչների ընթացիկ արժեքները և որոշում դրանց միջին արժեքները՝ P_{mizx} , P_{mizy} , P_{mizx} , որից հետո հաշվարկում են կտրման համագոր ուժի մեծությունը և նրա կազմած անկյունները X, Y, Z առանցքների հետ, ապա կտրման գոտում գրգռում են անդրաձայնային թրթռումներ կտրման համագոր ուժի ուղղությամբ ըստ հաշվարկված անկյունների: Նախապես փոփոխում են արդյունարար ուժի ուղղությամբ անդրաձայնային թրթռումների ամպլիտուդը, ապա չափում են մինչ գործիքի և մշակվող մեքենամասի միջև համան ժամանակահատվածը, հետո որոշում T1/T հարաբերությունը, որտեղ՝ T1 - մինչ գործիքի և մշակվող մեքենամասի միջև համան ժամանակահատվածն է, T-ն՝ կտրման գործընթացի ժամանակահատվածն է: Այնուհետև գտնում են անդրաձայնային թրթռումների ամպլիտուդի փոփոխման սահմանը, որի դեպքում T1/T հարաբերությունը գտնվում է 0,2...0,4 միջակայքում, ապա որպես թրթռակտրման օպտիմալ պարամետր ընտրում են թրթռումների ամպլիտուդի փոփոխման սահմանում գտնվող մեծագույն ամպլիտուդի արժեքը:

Բարձրացվում է կտրող գործիքի մաշակայունությունը, նվազեցվում է մեքենամասի մակերևութային խորդուբորդությունները, 2 նկ.:

(51) **2017.01** (11) **3109** (13) **A**
E01F7/00

(21) **AM20170032** (22) **09.03.2017**

(72) Պարգև Բալյան (AM), Վաչե Թոքմաջյան (AM), Գևորգ Վերանյան (AM), Հարություն Բալունց (AM)

(73) «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամ, Արցախի Հանրապետություն, Շուշի, Աշոտ Բեկորի 4 (AM), «Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան Զրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ, 0047, Երևան, Արմենակյան 125 (AM), «Պասկալ» ՍՊԸ, 0047, Երևան, Արմենակյան 125 (AM)

(54) Սելավապաշտպան կառուցվածք

(57) Գյուտը վերաբերում է լեռնահանքային արդյունաբերությանը, մասնավորապես՝ սելավապաշտպան կառուցվածքներին:

Սելավապաշտպան կառուցվածքն ունի սելավատար հունում տեղակայված արգելափակոց: Արգելափակոցը եռանկյունի հիմքով պրիզմա է, ընդ որում պրիզման հիմքով ամրացված է գետի հատակին: Պրիզմայի կողմնային նիստերով կազմված մի անկյունը ուղղված է սելավի շարժմանը հակառակ ուղղությամբ, ընդ որում՝ պրիզմայի կողմնային այդ նիստերի և սելավատար հունի ափերի միջև առկա են նեղացող ջրանցքեր:

Պահպանվում են տեղատարափ անձրևների հետևանքով ողողված հողերը և կանխվում է գետերի աղտոտումը, 2 նկ.:

(51) 2017.01 (11) 3110 (13) A
G01R 27/00

(21) AM20170030 (22) 03.03.2017

(72) Բորիս Մամիկոնյան (AM), Խորեն Մամիկոնյան (AM)

(73) Բորիս Մամիկոնյան, 3103, Գյումրի, Ն. Շնորհալի 25, բն. 24 (AM), Խորեն Մամիկոնյան, 3103, Գյումրի, Ն. Շնորհալի 25, բն. 24 (AM)

(54) Ունակային կերպափոխիչի պարամետրերի որոշման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է էլեկտրաչափողական տեխնիկային:

Ըստ ունակային կերպափոխիչի պարամետրերի որոշման եղանակի, ունակային կերպափոխիչին հաջորդաբար միացվող առաջին կոնդենսատորով ստացված չափողական երկբևեռանին սնում են բարձրահաճախային գեներատորի փոփոխական հոսանքով: Առաջին կոնդենսատորի և բարձրահաճախային գեներատորի միջև միացնում են երկրորդ կոնդենսատոր: Երկրորդ կոնդենսատորի սեղմակներին միացնում են միաբևեռ էլեկտրական փոխանջատիչի մեկական անշարժ հպակներ: Չափում են երկբևեռանի և ունակային կերպափոխիչի սեղմակների լարումների միջև փուլային շեղման անկյունը փոխանջատիչի երկու դիրքում, իսկ ունակային կերպափոխիչի ունակությունը և դիմադրությունը որոշում են համապատասխան բանաձևերով:

Բարձրացվում է ունակային կերպափոխիչի պարամետրերի որոշման ճշգրտությունը, 2 նկ.:

*ՕԳՏԱԿԱՐ
ՄՈԴԵԼՆԵՐ*

Օգտակար մոդելներին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի

11	արտոնագրի համարը
13	փաստաթղթի տեսակի կոդը Ս օգտակար մոդելի արտոնագիր
21	հայտի համարը
22	հայտի ներկայացման թվականը
23	ցուցահանդեսային առաջնության թվականը
31	առաջին հայտի համարը
32	առաջին հայտի ներկայացման թվականը
33	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
45	օգտակար մոդելի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը
51	միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչ(ները)
54	օգտակար մոդելի անվանումը
56	տեղեկատվության աղբյուրներ
57	օգտակար մոդելի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը
62	ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
72	օգտակար մոդելի հեղինակը (ները), երկրի կոդը
73	արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74	արտոնագրային հավատարմատար
85	միջազգային հայտի (PCT) ազգային փուլ փոխադրման թվականը
86	միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը
87	միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) 2017.01 (11) 487 (13) Ս
E04B1/00

(21) AM20160122U (22) 15.12.2016

(72) Աշոտ Սաֆարյան (AM), Վալտեր Աթանեսյան (AM)

(73) «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ, 0009, Երևան, Տերյան 105 (AM)

(54) **Շարժական ձողա-ծալքավոր կառուցվածք**

(57) Օգտակար մոդելը վերաբերում է շինարարության ոլորտին և կարող է օգտագործվել ձողա-ծալքավոր կառուցվածքների հավաքման համար:

Շարժական ձողա-ծալքավոր կառուցվածքն ունի հավաքման տարրեր, որոնք կատարված են կողային մակերևույթներ ունեցող երկթեք տանիքի տեսքով: Ձողա-ծալքավոր կառուցվածքի կողային մակերևույթները տեղադրված են շարժական սայլակների վրա ամրակցված իրենց միջով անցնող աղեղնաձև խողովակների վրա: Յուրաքանչյուր շարժական սայլակի վրա ամրակցված է նաև մետաղաձողերից կազմված տարածական կառուցվածք, որի վրա տեղադրված են ճոպանների ուղղորդման բլոկներ: Տարածական կառուցվածքը սևեռվում է ձողա-ծալքավոր կառուցվածքի կողային մակերևույթների հետ փոխազդեցավոր ձողի միջոցով: Շարժական սայլակներին ամրակցված են ամբարձիչներ, իսկ ձողա-ծալքավոր կառուցվածքի ճակատային վերին հատվածները միակցված են ձողա-ծալքավոր կառուցվածքը ճոպանների միջոցով ուղղաձիգ դիրքի բերող կարապիկներին:

Հեշտացվում է ձողա-ծալքավոր կառուցվածքի մոնտաժումը, ապամոնտաժումը և տեղափոխումը, 2 նկ.:

(51) 2017.01 (11) 488 (13) Ս
H04N 7/00
G05B 19/00

(21) AM20170031U (22) 07.03.2017

(72) Սերգո Օգանով (AM)

(73) Սերգո Օգանով (AM)

(54) **«Խելացի տուն» համակարգի տեսադիտման, մոնիտորինգի և կառավարման սարք**

(57) Սարքն ունի անշարժ հիմնային բլոկ, իր ուղղաձիգ առանցքի շուրջ պտտվող, լիտացիա կատարող գնդաձև խուց, պրոցեսոր, ջերմաստիճանի և խոնավության մեկական տվիչ, էլեկտրաէներգիայի աղբյուր և կապի միջոցներ: Հիմնային բլոկն ունի էլեկտրամագնիս և հաստատուն մագնիս: Խուցն ունի տեսախցիկ և հաստատուն մագնիս: Հաստատուն մագնիսները տեղադրված են նույնանուն բևեռներով միմյանց ուղղված: Հիմնային բլոկի հաստատուն մագնիսն օղակաձև է և ընդգրկում է էլեկտրամագնիսը: Խցի հաստատուն մագնիսը տեղադրված է դրա ստորին մասում: Պրոցեսորը, ջերմաստիճանի և խոնավության տվիչները տեղադրված են խցում, որում լրացուցիչ տեղադրված են խոսափողեր և բարձրախոս:

Իրականացման օրինակներից մեկում խցում լրացուցիչ տեղադրված են էլեկտրասնման մատուցման C տիպի USB հարակցիչ, ինֆրակարմիր ազդանշանի միջոցով կառավարվող կենցաղային տեխնիկայի հեռավերահսկման ազդանշանների հաղորդիչ, լուսավորվածության տվիչ, ոչ բավարար լուսավորվածության դեպքում պատկերի ապահովման ինֆրակարմիր լուսադիոդներ:

Իրականացման օրինակներից մյուսում սարքն ունի անլար լիցքավորման կայան, որի հաղորդիչ հարթ կոճը տեղադրված է հիմնային բլոկի վերին մասում, իսկ ընդունիչ հարթ կոճը տեղադրված է խցի ստորին մասում:

Ընդլայնվում են սարքի ֆունկցիոնալ հնարավորությունները, պարզեցվում է կառուցվածքը, 2 նկ.:

(74) Արեգ Պետրոսյան

**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ
ՆՄՈՒՇՆԵՐ**

**Արդյունաբերական նմուշներին վերաբերող
մատենագիտական տվյալների նույնականացման
միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.80 ստանդարտի**

11	վկայագրի համարը
13	փաստաթղթի տեսակի կոդը S արդյունաբերական նմուշի վկայագիր
21	հայտի համարը
22	հայտի ստացման թվականը
23	ցուցահանդեսային առաջնության թվականը
24	գրանցման թվականը
31	առաջնային հայտի համարը
32	առաջնային հայտի ներկայացման թվականը
33	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
51	արդյունաբերական նմուշների միջազգային դասակարգման (ԱՆՄԴ) ցուցիչը (ները)
54	արդյունաբերական նմուշի անվանումը
55	արդյունաբերական նմուշի պատկերը (գծանկարը, լուսանկարը)
72	հեղինակը(ները), երկրի կոդը
73	իրավատերը(երը), հասցեն, երկրի կոդը
74	արտոնագրային հավատարմատար

Տեղեկություններ գրանցված արդյունաբերական նմուշների մասին

(51) **01-03** (11) **415** (13) **S**
(21) **20160028** (22) **29.12.2016**
(72) Էդգար Մկրտչյան (AM)
(73) Էդգար Լյովայի Մկրտչյան, Արագածոտնի
մարզ, գ. Մաստարա 6-րդ փող., 2-րդ փակուղի,
տուն 7 (AM)
(54) **Պանիր գունավոր շերտերով (5 տարբերակ)**
(55)



1.1



3.1



4.1



2.1



5.1

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

ТОВАРНЫЕ ЗНАКИ

**Ապրանքային և սպասարկման նշաններին վերաբերող
մատենագիտական տվյալների նույնականացման
միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.60 ստանդարտի**

111	գրանցման հերթական համարը
151	գրանցման թվականը (հանրահայտ ճանաչման թվականը)
152	թվականը, որից սկսած նշանը հանրահայտ է
181	գրանցման գործողության ենթադրյալ ավարտը
210	հայտի համարը
220	հայտի ներկայացման թվականը
230	ցուցահանդեսային կամ այլ առաջնության թվականը
310	առաջին հայտի համարը
320	կոնվենցիայով առաջնության թվականը
330	երկրի կողը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
442	հայտի հրապարակման թվականը
511	ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը
526	չպահպանվող տարրեր
540	ապրանքային նշանը
551	կոլեկտիվ կամ հավաստագրային նշան
554	ծավալային նշան
555	հոլոգրաֆիական նշան
556	ձայնային նշան
591	գույնը և գունային համակցությունը
646	իրավաբանորեն փոխկապակցված այլ գրանցման համարը և թվականը
730	նշանի իրավատերը, հասցեն, երկրի կոդը
740	արտոնագրային հավատարմատար

Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին

(210) 20151524	(111) 25990
(220) 23.10.2015	(151) 12.06.2017
	(181) 23.10.2025
(730) Վերիզոն Թրեյդմարք Սերվիսիս ԼԼՔ, US	
(442) 16.08.2016	
(310) 86742413	(320) 31.08.2015
86742418	31.08.2015
86742431	31.08.2015
86742443	31.08.2015
86742452	31.08.2015
86742458	31.08.2015
86742462	31.08.2015
86742468	31.08.2015
86742474	31.08.2015
86742478	31.08.2015
86742490	31.08.2015
86742493	31.08.2015
86742501	31.08.2015
86742509	31.08.2015
86742518	31.08.2015
86742529	31.08.2015
(540)	



(511)
դաս 9. հեռակապի, հեռուստատեսության, համակարգչային ցանցի և տեղեկատվական տեխնոլոգիաների սարքավորանք, դետալներ և համակարգեր. հեռահաղորդակցական ծրագրեր. հեռախոսներ, պլանշետային համակարգիչներ և կապի անլար սարքեր ծայնի, տվյալների կամ պատկերների փոխանցման համար, մեդիախաղարկիչներ. հեռուստատեսային կցուրդներ. թվային տեսագրման համակարգեր (DVRs). հեռուստացույցների, համակարգիչների և կցուրդների հեռակառավարման սարքեր. թվային կրիչների հոսքային սարքեր. մոդեմներ և երթուղարարներ. արբանյակային նավագնացական համակարգեր, մասնավորապես՝ դիրքորոշման

համաշխարհային համակարգ. պարագաներ հեռախոսների, շարժական հեռախոսների, պլանշետային համակարգիչների և անլար կապի սարքերի համար, մասնավորապես՝ ականջակալներ և ականջապանակներ, հեռախոսների լիցքավորման սարքեր, կուտակիչների լիցքավորման սարքեր, ավտոմեքենաներում հեռախոսների հենարաններ, շարժական (բջջային) հեռախոսների հիմնականիքներ. լիցքավորման և տեղակայման կայաններ, շարժական հեռախոսների և պլանշետային համակարգիչների պաշտպանիչ պատյաններ, պաշտպանիչ ծածկոցներ և պատյաններ ձեռքի էլեկտրոնային սարքերի համար, պատյաններ շարժական (բջջային) հեռախոսների համար, լույսից և խաղերից պաշտպանող հարմարեցված պլաստմասսայե թաղանթներ շարժական (բջջային) հեռախոսների էկրանների համար. անլար և շարժական բարձրախոսներ. CD և DVD տուփեր. համակարգիչների պայուսակներ. մկնիկների գորգեր. համակարգիչների մկնիկներ. դեկորատիվ մագնիսներ. հեռակապի անլար սարքեր աուդիոյի, ձայնի, տվյալների, պատկերի, տեսագրությունների և հաղորդագրությունների փոխանցման համար, համացանց մուտք գործելու համար, դեպի նավագնացական և ուղղորդված ծառայություններ մուտքի համար և օդում երաժշտություն, տեսագրություններ և հավելվածներ ներբեռնելու հնարավորության համար, որոնք կարող են ներառել երաժշտական նվագարկիչ և տեսախցիկ. անլար կապի սարքեր, որոնք ստեղծում են տեղային, անլար ցանց. կրովի անձնական էլեկտրոնային սարքեր և սենսորներ, որոնք մշակում, պահեստավորում և փոխանցում են օգտատերի կենսաբանական տվյալները. անլար սարքերից պատրաստված կոճակի տեսքով մարմնի վրա տեղադրվող անձնական էլեկտրոնային վթարային համակարգ, որն օգտատերը սեղմում է ծանուցելու մյուսներին օգնության մասին և հեռակառավարման սարքեր, որոնց օգնությամբ ահագնազը ուղարկվում է

հեռախոսին. ծրագրերով ներկառուցված կրովի անձնական տեղային համակարգեր, որոնք թույլ են տալիս ծնողին տեսնելու երեխայի գտնվելու վայրը. հեռակապի, հեռուստատեսության, համակարգչային ցանցի և տեղեկատվական տեխնոլոգիաների համար համակարգչային սարքավորանք և համակարգչային ծրագրեր. ծրագրային հավելվածներ զվարճության, խաղերի և արդյունավետության բնագավառում. ցանցի կառավարման ծրագրեր, ցանց մուտք գործելու և ցանցի պահպանման համակարգերի ստեղծման և պահպանման կառավարման ծրագրեր. համաշխարհային համակարգչային ցանցի և ինտերակտիվ համակարգչային կապի ցանցի համակարգչային ծրագրեր. կողավորման համակարգչային ծրագրեր. համակարգիչների և ցանցի անվտանգության համակարգչային ծրագրեր. միջհամակարգչային (m2m) ծառայությունների, համացանցին միանալու սարքերի և իրերի ներցանցի (IoT) համար համակարգչային ծրագրեր. հավելվածների մշակման ծրագրերի փաթեթներ և կիրառական խնդիրների ծրագրային ինթերֆեյս միջհամակարգչային (m2m) և իրերի ներցանցի (IoT) սարքերի, իրերի ներցանցի (IoT) ապրանքների և ծառայությունների հետ կապված ծրագրերի և հավելվածների ստեղծման համար. իրերի ներցանցի (IoT) և տվյալների միացման, սարքերի կառավարման, ընդհանուր տեսքի, բաժանորդագրության, կառավարման և հսկողության համար համակարգչային ծրագրեր. համակարգչային ծրագրեր, որոնք հավաքագրում և հաղորդում են տվյալներ համացանցին միացված միջհամակարգչային (m2m) և իրերի ներցանցի (IoT) սարքերից և տվյալները համալրում են կորպորատիվ, վեբ և բջջային հավելվածների ծրագրերում. համակարգչային հավելվածներ ձայնի, տվյալների և լուսանկարների հաղորդման և տարածման համար. համակարգչային ծրագրային ապահովում համացանցի հիման վրա հեռուստատեսային հեռարձակման տրամադրման համար. տեքստի, տվյալների, գրաֆիկայի, պատկերների, տեսագրությունների, էլեկտրոնային խաղերի, թվային մեդիայի և էլեկտրոնային հրապարակումների ստեղծման, բեռնավորման, հաղորդման, ընդունման, խմբագրման, առանձնացման,

կողավորման, կողագերծման, ցուցադրման, թողարկման, արխիվացման և կազմակերպման համակարգչային ծրագրեր. տեսագրությունների և էլեկտրոնային խաղերի համակարգչային ծրագրեր. բովանդակության փոխհաղորդման համակարգչային ծրագրեր. տեսագրությունների սահմանափակման, զատման, կրճատման համակարգչային ծրագրեր. տվյալների և տեղեկատվության հավաքագրման, խմբագրման, կազմակերպման, փոփոխման, առանձնացման, հաղորդման, արխիվացման և տարածման համակարգչային ծրագրեր. բջջային (շարժական) հեռախոսների համար համակարգչային հավելվածներ, մասնավորապես՝ համակարգչային ծրագրեր տվյալների մշակման համար. բջջային (շարժական) հեռախոսների համար համակարգչային հավելվածներ, մասնավորապես՝ հաղորդակցմանը նպաստող համակարգչային ծրագրեր. անլար սարքերի համար էլեկտրոնային խաղերի համակարգչային ծրագրեր. տարբերակիչ նշանների համակարգչային ծրագրեր ձայնի, պատկերների և տվյալների տարածման համար. մարզավիճակի, ակտիվության և առողջության մասին տեղեկատվության տարածման համակարգչային ծրագրեր. մարզական և առողջապահական ծրագրերին վերաբերող տեղեկատվության կառավարման համար համակարգչային ծրագրեր. կենսաչափական վերահսկման սարքերի և տվյալների համար համակարգչային ծրագրեր. համակարգչային ծրագրեր, որոնք թույլ են տալիս հեռակապի ցանցերին, համացանցի վեբ-կայքերին և շարժական (բջջային) հեռախոսներին հաղորդելու քարտեզավորման, նավագնացության, երթևեկության, եղանակի և տեսարժան վայրերի մասին տեղեկատվություն. համակարգչային սարքավորանք և ծրագրային համակարգեր, մասնավորապես՝ ներկառուցված ախտորոշիչ հաշվիչ սարքեր, ռադիոընդունիչներ և բարձրախոսներ, որոնք ծրագրավորված են GPS համակարգով և շարժական (բջջային) հեռախոսակապով ճանապարհային վթարների տեխնիկական օգնության, ձայնի և տվյալների հաղորդման, տրանսպորտային միջոցների տեղակայման և վերանորոգման, իրական ժամանակում

տրանսպորտային միջոցների ախտորոշման, շտապ պատահարների ընդունման և ճանապարհային վթարների տեխնիկական օգնության կառավարման համար. ճանապարհային վթարների տեխնիկական օգնության կառավարման համակարգչային ծրագրեր սպասարկման կենտրոնների համար. ավտոկայանատեղի համար վճարման ժամանակը ցույց տվող հավելվածներ բջջային հեռախոսների համար. քարտեզի վրա տրանսպորտային միջոցների գտնվելու վայրը ցույց տվող բջջային (շարժական) հեռախոսների հավելվածներ. համակարգչային ծրագրեր, որոնց օգնությամբ օգտատերերը ծանուցվում են տրանսպորտային միջոցի տեխնիկական սպասարկման մասին. վճարում կատարելու, գումար փոխանցելու և ստանալու համար համակարգչային ծրագրեր. համակարգչային ծրագրեր շարժական, բջջային հեռախոսներով վճարումները հեշտացնելու համար. էլեկտրոնային ֆինանսական հարթակներ, որոնք ապահովում են տարբեր տեսակի վճարումների և դրամական պարտավորություններով գործարքների կատարումը շարժական (բջջային) հեռախոսներով.

դաս 14. ժամացույցներ (ծեռքի). սպորտային ժամացույցներ. ոսկերչական իրեր. ժամացույցներ. վայրկյանաչափներ շարժական գի հետ.

դաս 16. տպագիր արտադրանք, մասնավորապես՝ հեռախոսահամարների տեղեկագրքեր. պարսավագրեր, բրոշյուրներ, տպագիր թերթեր և քարտեր և կրթական և ուսուցողական նյութեր՝ բոլորը հեռակապի, համացանցի և տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում. մատիտներ. թանաքով գրիչներ. գրիչ-մարկերներ. բլոկնոտներ, ծոցատետրեր, հուշատետրեր. կաշուն բլոկնոտներ, ծոցատետրեր, հուշատետրեր. ճնշած ձևեր (թղթաճնշիչներ). օրացույցներ. թղթի կարիչներ. թղթադրամի սեղմիչներ.

դաս 18. սպորտային պայուսակներ. անձրևի հովանոցներ. մեծ տնտեսական պայուսակներ. այցեքարտերի թղթապանակներ. թիկնապայուսակներ. կաշվե իրեր փաստաթղթերի համար. ուղեբեռի պիտակներ.

դաս 24. գոլֆի սրբիչներ. դրսում օգտագործելու ծածկոցներ, վերմակներ. լողափի սրբիչներ.

դաս 25. հագուստ, մասնավորապես՝ գլխի ծածկոցներ, բաճկոններ, շապիկներ (բլուզներ), վարտիքներ (փոխաններ) և գլխարկներ. կենսաչափական վերահսկող սարքեր պարունակող շապիկներ (բլուզներ), վարտիքներ (փոխաններ) և գլխարկներ. հողաթափներ. փողկապներ. ձեռնոցներ. վզպատներ.

դաս 28. գոլֆի սարքավորանք, մասնավորապես՝ հարմարանքներ հողի գնդերը տեղում դասավորելու համար (գոլֆի պարագաներ), հարմարանքներ գոլֆի գնդակները չափանշելու համար, գոլֆի գնդակներ, գոլֆի գնդակների տարբերանիշեր. լողափի գնդակներ. յոյոներ. թռչող սկավառակներ. փուչիկներ. խաղաղառներ (վեգ, ճան), դոմինո. խաղաթղթեր. պոկերի խաղանիշեր, ֆիշկաներ. ֆուտբոլի գնդակներ.

դաս 35. մանրածախ և ինտերնետ խանութների վաճառքի ծառայություններ կապված հեռակապի և տեղեկատվական տեխնոլոգիաների ապրանքների և ծառայությունների, անլար էլեկտրոնային սարքերի և աքսեսուարների՝ ականջակալների, մարտկոցների և պատյանների, կրովի անլար տեխնոլոգիաների՝ սմարթ-ժամացույցների և ֆիթնեսի սարքերի, խաղերի հսկիչ սարքերի, կրիչների հոսքային սարքերի, հեռուստատեսային բաժանորդագրությամբ վերաբերվող ապրանքների և ծառայությունների, կենցաղային տեխնիկայի, համացանցին միանալու տնային սարքերի, այդ թվում՝ թերմոստատների (ջերմապահպանիչների), լուսավորման և տան անվտանգության սարքերի հետ, և ապրանքների ցուցադրում. հեռուստատեսային բաժանորդագրություն. հեռակապի ապրանքների և ծառայությունների, բաժանորդագրությամբ հեռուստատեսային ապրանքների և ծառայությունների, թվային տեխնոլոգիաների և զեղչով և օգտատերերի առցանց կտրոններով ձեռք բերված էլեկտրոնիկայի առաջխաղացում. հեռուստատեսության, կինոնկարների, երաժշտության, ուղիղ եթերի իրադարձությունների, տեսագրությունների, խաղերի և մուլտիմեդիային բովանդակության հաղորդման համար բաժանորդագրության ծառայություններ. վճարային կամ կանխավճարային բաժանորդագրության համար

հեռուստատեսությամբ, համակարգչով, դյուրակիր համակարգիչներով, շարժական (բջջային) հեռախոսներով և այլ անձնական էլեկտրոնային սարքերի օգնությամբ էլեկտրոնային կամ համացանցով տրամադրվող ծայնագրությունների, տեսագրությունների, տվյալների, խաղերի և մուլտիմեդիային բովանդակության տրամադրում. մանրածախ ինտերնետ խանութների առցանց ծառայություններ. սպորտային մրցումների և միջոցառումների առաջխաղացում երրորդ անձանց համար. նորարարության և տեխնոլոգիաների առաջխաղացման նպատակով խրախուսական պարգևատրումներով հաղորդումների անցկացում. երրորդ անձանց համար գովազդ շարժական (բջջային) էլեկտրոնային սարքերում. երրորդ անձանց ապրանքների և ծառայությունների առաջխաղացման նպատակով անլար կապի բաժանորդներին տվյալների տրամադրում. զեղչային համակարգով ծրագրերի կառավարում, որը թույլ է տալիս մասնակիցներին զեղչով ձեռք բերելու ապրանքներ և ծառայություններ, օգտագործելով զեղչի քարտը. գովազդ և առաջխաղացման ծառայություններ, այդ թվում՝ զեղչի տրամադրմամբ երրորդ անձանց ապրանքների և ծառայությունների առաջխաղացում, ներառյալ՝ մեքենաների վերանորոգման և տուրիստական ծառայությունների զեղչեր. հեռակապի և հեռուստատեսային ծառայությունների վաճառքի առաջխաղացում խրախուսական պարգևատրմամբ ծրագրերի միջոցով, որտեղ օգտատերերը պարգևատրվում են նոր օգտատիրոջը բաժանորդագրելու համար. բարեգործական ծառայություններ, մասնավորապես՝ էկոլոգիայի խնդիրների, ոստիկանության և նախաձեռնությունների մասին հասարակության իրազեկման առաջխաղացում. բարեգործական ծառայություններ, մասնավորապես՝ կամավոր աշխատողների ծրագրերի և համայնքային ծրագրերի կազմակերպում և անցկացում.

դաս 36. սպորտային, կրթական և զվարճալի ծրագրերի և իրադարձությունների ֆինանսային աջակցություն. դրամական էլեկտրոնային փոխանցումներ. ֆինանսային փոխանցումների ծառայություններ, մասնավորապես՝

անվտանգ կոմերցիոն փոխանցումների և վճարումների տրամադրում. բարեգործական ֆոնդերի ծառայություններ, մասնավորապես՝ ֆինանսային աջակցություն երրորդ անձանց ծրագրերի և ծառայությունների համար. գրանտների տրամադրում գրականության բնագավառում հետազոտության և կրթության, տնային բռնության կանխման, երեխաների կրթության առաջխաղացմանը, գիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության և մաթեմատիկական առարկաների բնագավառում, առողջապահության և առողջապահական տեխնոլոգիաների, շրջակա միջավայրի խնդիրների և «խելացի» էներգետիկայի համակարգերի համար.

դաս 37. հեռակապի ցանցերի և սարքավորումների, համակարգչային սարքավորանքի, համակարգչային համակարգերի և կապի ցանցերի տեղադրում, տեխնիկական սպասարկում և վերանորոգում. հեռախոսալարերի և հեռախոսների բնիկների վերանորոգում և տեխնիկական սպասարկում. ճանապարհային վթարների հրատապ տեխնիկական օգնություն, մասնավորապես՝ ճանապարհի վթարային կանչերի ընդունում, իջած անվադողերի փոխում (վերանորոգում), վառելիքի հրատապ լիցքավորում և մարտկոցի գործարկում. հեռախոսով ավտոմեքենաների տեխնիկական խորհրդի և տեղեկատվության տրամադրում.

դաս 38. հեռակապի ծառայություններ. հեռուստահեռարձակում, ձայնային և տեսային ծրագրերի և հեռուստատեսային հաղորդումների հեռարձակում և հաղորդում հեռուստատեսությամբ, համակարգչով և անլար էլեկտրոնային սարքերի միջոցով. հարցմամբ, ըստ պահանջի տեսաֆիլմերի (VOD) ծառայություններ. միանգամյա վճարումով դիտման ծառայություն (PPV), հեռուստահավելվածների և թվային ձայնագրիչների (DVRs) վարձույթ հեռուստացույցի հետ օգտագործման համար. սոցցանցերում առցանց ռեժիմով զրույցի սենյակների տրամադրում. հեռուստատեսության, կինոնկարների, երաժշտության, ինտերակտիվ իրադարձությունների, տեսագրությունների, խաղերի և մուլտիմեդիային բովանդակության էլեկտրոնային հաղորդում և հեռարձակում

երրորդ անձանց համար. հեռակապի և տեղեկատվական տեխնոլոգիաների ծառայություններ, այդ թվում՝ ձայնի, ձայնագրությունների, տեսագրությունների, պատկերների, տեղեկատվության, տվյալների և այլ բովանդակության հաղորդում կապի ցանցի, անլար կապի ցանցի, համացանցի, օպտիկաթելային կապի ցանցերի և համակարգչային տվյալների այլ ցանցերի միջոցով. թվային բաժանորդային գծի (DSL) և գերարագ համացանցի ծառայություններ. էլեկտրոնային փոստի ծառայություններ. բազմանգամյա օգտատերերին դեպի համաշխարհային կապի ցանց ինտերակտիվ մուտքի տրամադրում. բազային ցանցի ծառայություններ, այդ թվում՝ գերարագ բաժանորդային գիծ կամ կապի ճյուղեր, որոնք համացանցում կառուցում են գլխավոր մայրուղի. լայն տարածության կապի ցանցերի (WAN) հաղորդման ծառայություններ. լոկալ համակարգչային ցանցի հաղորդման ծառայություններ. ասինքրոնացման փոխանցման ռեժիմի (atm) ծառայություններ, այդ թվում՝ ֆիքսված փոքր չափի սյունակներում կոդավորված տեղեկատվության հաղորդում. համալիր ծառայությունների տրամադրմամբ թվային ցանցի ծառայություններ (isdn). ինտերնետային կանխագրով (ip) միջցանցային կապի ծառայություններ, մասնավորապես՝ համացանցով տեղեկատվության հաղորդում. վիրտուալ մասնավոր ցանցի ծառայություններ (vpn) և մասնավոր գծի ծառայություններ, այդ թվում՝ համակարգչային ցանցով իրական ժամանակում մասնավոր և անվտանգ էլեկտրոնային կապի տրամադրում. էլեկտրոնային համակարգով տվյալների հաղորդման ծառայություններ. ձայնի, տվյալների, տեսագրությունների և մուլտիմեդիայի հաղորդման կոմուտացիոն ծառայություններ. համացանցին և այլ համակարգչայինացված կապերին, տվյալների հաղորդման ցանցերին և անլար ցանցերին հեռակապի տրամադրում. անլար կապի ցանցին զուգահեռ մուտքի տրամադրում. հեռակապի մուտքի տրամադրման ծառայություններ, այդ թվում՝ անկախ հեռակապերը և համակարգչային ցանցերը կապելու նպատակով մուտքի տրամադրում համացանցում տվյալների

հաղորդման հաճախականության համար. տեսային, ձայնային և տվյալների հաղորդման հեռախոսային կոնֆերանս ծառայություններ. անլար հեռակապի ծառայություններ, մասնավորապես՝ ձայնի և տվյալների անլար հաղորդում. հեռակապի ծառայություններ, մասնավորապես՝ ինտերնետային կանխագրով ձայնի տրամադրում (voip). էլեկտրոնային հաղորդագրությունների ծառայություններ. հեռակապի և համակարգչայինացված կապի ոլորտում խորհրդատվություն. ցանցային մուտքի կետի տրամադրում (NAPs) օգտատերերի միջև համացանցում տվյալների փոխանակման ինտենսիվության համար. էլեկտրոնային նամակների և տեքստի հաղորդման ծառայություններ. հեռակապի և տեղեկատվական տեխնոլոգիաների ծառայություններ, մասնավորապես՝ հեռախոսային և ձայնի փոխանցման ծառայություններ. հեռախոսաժողովների ծառայություններ. կոդավորված և կոդավերծանված տվյալների և ձայնի էլեկտրոնային փոխանցման ծառայություններ. տեղեկատվության տեղեմատիկ հաղորդում. հեռակառավարման միջոցով տվյալների և տեղեկատվության փոխանցում. հեռակառավարման ժամանակ օպերատորի ներկա լինելու տպավորություն ստեղծելու ծառայություն. տրանսպորտային միջոցների ապահովության, անվտանգության, ախտորոշման և կառավարման մասին տեղեկատվության տեղեմատիկ հաղորդում. ավտոմոբիլային տրանսպորտային միջոցներում երկկողմանի անլար լայնաշերտային կապի ծառայության տրամադրում. տրանսպորտային միջոցների ախտորոշման և տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկատվության և տեխնիկական սպասարկման հիշեցումների տրամադրում էլեկտրոնային փոստի, ցանցի և հեռախոսային հավելվածների միջոցով. հեռակապի ծառայություններ, մասնավորապես՝ տրանսպորտային միջոցից հեռազանգի հնարավորության տրամադրում հաղորդելու պատահարի, հրատապ դեպքերի մասին, տրանսպորտային միջոցի գտնվելու վայրը որոշելու և շտապ օգնության անձնակազմը ուղարկելու նպատակով. վթարային, փրկարարական ծառայություններ, մասնավորապես՝

հեռակապի ցանցով տազնապի մասին էլեկտրոնային հաղորդագրությունների ուղարկում. առողջապահության բնագավառում տվյալների և տեղեկատվության անվտանգ էլեկտրոնային փոխանցում. բովանդակության առաքման ցանցի ծառայություն. հաղորդակցման թվային միջոցների հարթակ հաղորդակցման թվային բովանդակության կողավորման, առաքման և ցուցադրման համար. օգտատերերի սարքավորանքի (CPE) վարձույթ. անվճար հեռախոսազանգերի ծառայություն. հեռախոսի սպասարկման կենտրոնների և բաժանորդագրման կենտրոնների ծառայությունների տրամադրում. ծայնային արձագանքի և զանգերի բաշխման ծառայություններ. ծայնային էլեկտրոնային հաղորդագրության ծառայություններ, մասնավորապես՝ ծայնային հաղորդագրությունների ծայնագրում և փոխանցում հեռախոսով, տեքստի, թվերի և նկարների անլար թվային հաղորդագրությունների ծառայությունների և էլեկտրոնային փոստի ծառայությունների միջոցով. հեռակապի միջհամակարգչային (m2m) ծառայություններ. իրերի ներգանցի (IoT) հեռակապի ծառայություններ. անլար կապի միջհամակարգչային (m2m) ծառայությունների սարքերին, ցանցին միացված սարքերին և իրերի ներգանց (IoT) պարունակող համացանցին միացված սարքերին տվյալների էլեկտրոնային հաղորդման և տեղեկատվության տրամադրում. անլար կապի ցանցերին տվյալների էլեկտրոնային հաղորդում միջհամակարգչային (m2m) ծառայությունների, իրերի ներգանցի (IoT) ծառայությունների և համացանցին միացված սարքերի համար. արդյունաբերության տարբեր բնագավառներում բազային հիմնապաշարների և համացանցին միացված սարքերի մոնիտորինգ, տեղադրում, վերականգնում և հսկում. միջհամակարգչային (m2m) ծառայության տեխնոլոգիաների, համացանցին միացված սարքերի, հեռակառավարման սարքերի կառավարման և իրերի ներգանցի (IoT) բնագավառում հեռակապի հարցերով խորհրդատվություն. միջհամակարգչային (m2m) ծառայություններ, մասնավորապես՝ տրանսպորտային միջոցների կայանատեղերի կառավարում. բարեգործական

ծառայություններ, մասնավորապես՝ տնային բնություններից տուժածներին և դրանց հետ կապված իրավապահ կազմակերպություններին անլար կապի հեռախոսների և եթերային ժամանակի տրամադրում. բաժանորդագրման վրա հիմնված հեռարձակման ծառայություններ. բարեգործական նպատակներով հեռահաղորդակցություն, մասնավորապես՝ տնային բնության տուժածներին և հարակից հասարակական կազմակերպություններին շարժական, բջջային հեռախոսների և ազատ եթերի տրամադրում.

դաս 39. ճանապարհային վթարների հրատապ տեխնիկական օգնություն, մասնավորապես՝ քարշակում, ամբարձում և բանալիների առաքում. տրանսպորտային միջոցի գտնվելու վայրը որոշելու նպատակով աշխարհագրական տեղեկատվության տրամադրում. հեռակապի ցանցերի և բջջային (շարժական) հեռախոսների միջոցով տեղեկատվության տրամադրում, մասնավորապես՝ երթուղու կազմում, նավագնացություն, համաշխարհային տեղադրության մասին տեղեկատվության տրամադրում. երթևեկությանը վերաբերվող տեղեկատվության տրամադրում, մասնավորապես՝ ճանապարհային խցանումների մասին, և ճանապարհորդությանը վերաբերվող տեղեկատվության տրամադրում, մասնավորապես՝ գազալցակայանների և տեսարժան վայրերի մասին տեղեկատվության տրամադրում. աշխարհագրական տեղեկատվության, քարտեզի և երթուղու վերաբերյալ վեբ-կայքերի և վեբ-կայքի էջերի տրամադրում. տվյալների արխիվացում և պահպանում երրորդ անձանց համար. համակարգչային և հեռակապի սարքավորումների պահպանում երրորդ անձանց համար.

դաս 41. հեռուստացույցով, համակարգչով և անլար կապի էլեկտրոնային սարքերի միջոցով հեռուստանորությունների, տեսային և ծայնային ներկայացումների ցուցադրում. համացանցով տրամադրվող էլեկտրոնային խաղերի ծառայություններ. մուլտիմեդիային զվարճալի բովանդակության զարգացման, ստեղծման, արտադրման և վերջնական մոնտաժման ծառայություններ. զվարճանքի ծառայություններ, մասնավորապես՝ առարկաների լայն տեսականիով հեռուստատեսային, տեսային

և ուղիղ եթերի հաղորդումների տրամադրում. զվարճության բնագավառում համացանցում վեբ-կայքի մուտքի տրամադրում. հեռակապի և անլար կապի սարքերի օգտագործման առաջխաղացման համար ծիարշավագրազների և մարտերի կազմակերպում. խրախուսական մրցանակներով ծրագրերի տրամադրում, որոնք նախատեսված են պարգևատրելու նորամուծության և տեխնոլոգիաների բնագավառում վարպետություն ցուցաբերած մասնակիցներին. մարզադաշտերի սարքավորումների վարձույթ.

դաս 42. համակարգչային ծրագրեր և համակարգչային ցանցերի ծառայություններ. կապի ծրագրային ապահովում. համակարգչային ծառայություններ, մասնավորապես՝ երրորդ անձանց համար համակարգչային ցանցերի տեխնիկական շահագործում և կառավարում. կառավարվող համակարգչային ծառայություններ և ցանցային գործառնություններ երրորդ անձանց համար. ամպային տեխնոլոգիաների օգնությամբ հաշվարկում. ամպային տեխնոլոգիաներով սերվերների տարածքների վարձակալման ծառայություններ. համակարգչային ծառայություններ, մասնավորապես՝ հեռակառավարում, տեղում կառավարում և տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերի կառավարում երրորդ անձանց համար, ներառյալ՝ վիրտուալ և ֆիզիկական ինֆրակառուցվածքի, սերվերների, պահեստային համակարգերի, ցանցերի և համակարգչային ծրագրերի կառավարում. համակարգչային տվյալների վերանորոգում և հեռակառավարմամբ պահեստային պատճենների ստեղծում. տվյալների վերականգնման ծառայություններ և համակարգչային վթարների դեպքում տվյալների վերականգնում. ամպային տեխնոլոգիաների հաշվարկման միջոցով վիրտուալ համակարգչային համակարգերի և վիրտուալ համակարգչային պայմանների տրամադրում. համակարգչային ծառայություններ, որոնց օգնությամբ տրամադրվում են, մասնավորապես՝ ինֆրակառուցվածքի կառավարումը, ամպային հաշվարկների օգնությամբ հաշվարկված հանրային և մասնավոր տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային հավելվածների վերահսկումը, կազմակերպումը և կառավարումը.

հանրային և մասնավոր ամպային տեխնոլոգիաների ծառայությունների համալրում. ամպային տեխնոլոգիաների ծառայությունների և ամպային տվյալների պահեստավորման տրամադրում. խորհրդատվություն ամպային տեխնոլոգիաների բնագավառում. տեխնիկական խորհրդատվություն տվյալների մշակման կառուցվածքի և ամպային տեխնոլոգիաների բնագավառում. ներքին և արտաքին տվյալների մշակման կենտրոնի սարքավորումների, տվյալների բազայի և համակարգչային հավելվածների հեռակառավարում և կազմակերպում երրորդ անձանց համար. համակարգչային ապարատային հոսթինգ ծառայություններ, մասնավորապես՝ երրորդ անձանց սարքավորումներով համակարգչային սերվերների տեղադրման համար միջոցների տրամադրում. անվտանգ, արտաքին պայմաններով կառավարվող միջոցների տրամադրում երրորդ անձանց համակարգչային սերվերների և ցանցային սարքավորումների համար. համակարգչային սերվերների և հեռակապի և ցանցի սարքավորումների տեխնիկական վերահսկում երրորդ անձանց համար. համակարգչային ինֆրակառուցվածքային ծառայություններ, մասնավորապես՝ հեռակառավարվող համակարգչային ցանցի սերվերների տրամադրում. համակարգչային ծառայություններ, մասնավորապես՝ համացանցով և այլ համակարգչային ցանցերի միջոցով վիրտուալ հեռակառավարվող համակարգչային ծրագրերի վիրտուալ առցանց ոլորտի տրամադրում. հաշվարկված հզորության վարձույթ, մասնավորապես՝ համակարգչային ծրագրային ապահովման, համակարգչային ծրագրեր և համակարգչային ցանցի սարքավորումների վարձույթ. համակարգչային սերվերների վարձույթ. վիրտուալ ինֆրակառուցվածքի և համակարգչային ցանցի տեխնիկական կառավարում. ամպային տեխնոլոգիաների ցանցի օգտագործման և մուտքի համար չբեռնվող ծրագրերի ժամանակավոր օգտագործման տրամադրում. համակարգչային ծառայություններ, մասնավորապես՝ համակարգչային համակարգերի գնահատում և վերլուծություն, ներառյալ՝ ներքին համակարգչային

համակարգերը, արտաքին համակարգչային համակարգերը և համաշխարհային համակարգչային ցանցի համակարգերը, որոնք համապատասխանեցվում են արդյունաբերական չափանիշներին. համակարգչային ծրագրերի մշակում երրորդ անձանց համար. ծրագրերի մշակման և թեստավորման օգտագործման համար առցանց չբեռնվող ծրագրերի ժամանակավոր օգտագործում, այդ թվում՝ ծրագրերի մշակման կազմերի և հավելվածների. տեղեկատվության տրամադրում անկախ համակարգչային ծրագրի մշակման բնագավառում համացանցով. երրորդ անձանց համար համակարգչային ցանցի և համակարգչային համակարգերի մշակում, զարգացում և ապահովում. համակարգչային ցանցի և համակարգչային համակարգերի վերահսկում՝ կանոնավոր գործառնումն ապահովելու համար. համակարգչի և համակարգչային ցանցի վերահսկման ծառայություններ, մասնավորապես՝ գործունեության արդյունքների հաշվետվություն և բեռնման հաշվեկշիռում որակի վերահսկման համար. նույնացման ծառայություններ հեռակապի և ցանցի ծառայությունների բնագավառում. չբեռնվող ցանցի ստուգված ծրագրերի ժամանակավոր օգտագործում տվյալների ցանցի և անվտանգ կապի բնագավառում. առցանց անվտանգության ծառայություններ, մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով փոխանցվող կրեդիտ քարտերի գործառնությունների անվտանգության և գաղտնիության տրամադրում. մշակում հեռակապի և համակարգչային կապի և տվյալների ցանցի բնագավառում. տեղեկատվական տեխնոլոգիայի, համակարգչային ծրագրավորման, տվյալների կենտրոնի կառավարման և համաշխարհային համակարգչային ցանցի բնագավառին վերաբերող դիզայներական ծառայություններ և խորհրդատվություն. համակարգչային ծրագրերի տեղակայում, տեխնիկական սպասարկում և վերանորոգում. գործող էլեկտրոնային տեղեկատվական ցանցեր. համակարգչային վթարի վերականգնման ծրագրավորում. տարածքային, ամպային և հիբրիդային միասնական հաղորդակցության համակարգերի նախագծում. չափանիշների

համապատասխանեցման կառավարման և ռիսկի գնահատման չբեռնվող համակարգչային ծրագրերի ժամանակավոր օգտագործման տրամադրում համակարգիչների և ցանցի անվտանգության բնագավառում. չբեռնվող ցանցի անվտանգ ծրագրերի ժամանակավոր օգտագործման տրամադրում. համակարգչային խորհրդատվություն համացանցի և ցանցի անվտանգության բնագավառում, և տվյալների և տեղեկատվության անվտանգ հաղորդում. տեխնիկական խորհրդատվական ծառայություններ համակարգչային ծրագրերի, համակարգչային միջոցների և համակարգչային ցանցերի բնագավառում, մասնավորապես՝ մշակմանը, ստեղծմանը, կառուցվածքին և օգտագործմանը վերաբերվող խորհրդատվության տրամադրում. տեխնիկական խորհրդատվական ծառայություններ, մասնավորապես՝ համակարգչային միջոցների թերությունների և վիրտուալ և ֆիզիկական ինֆրակառուցվածքին, սերվերներին, պահեստային համակարգերին և ցանցին վերաբերվող ծրագրերի խնդիրների վերացում. տեխնիկական խորհրդատվական ծառայություններ համակարգչային ծրագրերի բնագավառում, մասնավորապես՝ ծրագրերի տեխնիկական սպասարկմանը վերաբերվող խորհրդատվության տրամադրում. համակարգչային ինֆրակառուցվածքային տեխնոլոգիաներին վերաբերվող տեխնիկական ապահովման ծառայություններ, մասնավորապես՝ սերվերներին, պահեստային համակարգերին, ցանցին և ծրագրերին վերաբերվող տեխնիկական խորհուրդ և տեխնիկական սպասարկման կազմակերպում. համակարգչային ցանցերի և կապի ցանցի անվտանգ ծառայություններ պաշտպանական ազդանշանման, անվտանգության սպառնալիքի վերահսկման, տեղեկատվական անվտանգության կառավարման ծառայությունների, կառավարման և գնահատման պաշտպանության աստիճանի, սպառնալիքի վերահսկման և տեխնիկական վերահսկման և չհաստատված մուտքի պաշտպանության թեստավորման բնագավառում. տվյալների և ծրագրերի կոդավորման ծառայություններ. համակարգչային խորհրդատվություն համակարգչային անվտանգության բնագավառում, որը հաղորդում է տվյալների

անվտանգ փոխանցումը, տվյալների կողավորումը և կողագերծումը. ապրանքների և ծառայությունների փորձարկումը, վերահսկումը և գնահատումը երրորդ անձանց համար համակարգիչների և համակարգիչների անվտանգության գնահատման բնագավառում. խորհրդատվական ծառայություններ համակարգիչների անվտանգության և կապի ցանցի անվտանգության բնագավառում. հավելվածների և վեբ-կայքերի տեղադրում սերվերում երրորդ անձանց համար. տեղեկատվության տրամադրում տրանսպորտային միջոցների ախտորոշման և տրանսպորտային միջոցների ախտորոշիչ գրառումների բնագավառում համակարգչային տեղեկատվական ցանցի միջոցով. տրանսպորտային միջոցների արտանետման բաշխում և աշխատանքների վերահսկում. չբեռնվող ծրագրեր միջհամակարգչային (m2m) ծառայությունների և ցանցի և ինտերնետին միացված սարքավորանքի համար. չբեռնվող ծրագրեր իրերի ներցանցի (IoT) համար. միջհամակարգչային (m2m) ծառայությունների, իրերի ներցանցի (IoT) ծառայությունների, միացված և հեռացված սարքերի կառավարման ծրագրային հարթակ. ծրագրային հարթակներ, որոնք տրամադրում են մշակման պայմաններ, հավելվածների մշակման ծրագրերի փաթեթներ (sdk) և կիրառական խնդիրների ծրագրային ինտերֆեյս (api) հավելվածներ ստեղծելու միջհամակարգչային (m2m) սարքերի, ցանցի և համացանցի կապի միջոցների և հեռակառավարվող սարքերի և մեքենաների համար, որոնք թույլ են տալիս նման սարքերի և մեքենաների ապահովումը, վերահսկումը և կառավարումը. էկրանին վեբ-պորտալի և կապի հնարավորության տրամադրում, միջհամակարգչային (m2m) և իրերի ներցանցի (IoT) սարքերի օգտագործում և ապահովում. ճարտարագիտություն և համակարգչային խորհրդատվություն, ձևավորում և մշակում միջհամակարգչային (m2m) և իրերի ներցանցի (IoT) կապի և միացված սարքերի բնագավառում. տեխնիկական ապահովում միջհամակարգչային (m2m) և իրերի ներցանցի (IoT) կապի և միացված սարքերի բնագավառում. համակարգչային ծառայություններ, մասնավորապես՝ գրանցված օգտատերերի համար

վիրտուալ ընկերությունների ստեղծումը քննարկումներին մասնակցելու և համացանցում ներգրավվելու համար. չբեռնվող ծրագրեր ճայնատեսագրային բովանդակությունը հավաքագրելու, խմբագրելու, փոխանցելու, պահելու և տարածելու համար. չբեռնվող ծրագրերի ժամանակավոր օգտագործման վեբ-կայքի տրամադրում, որը թույլ է տալիս վեբ-կայքի օգտատերերին ներբեռնել, ուղարկել և ցուցադրել առցանց տեսագրությունները տարածելու նպատակով. վեբ-կայքի տեխնոլոգիաների տրամադրում, որոնք թույլ են տալիս օգտատերերին մշակելու երգերի անհատական ցուցակ, որը ստեղծում է անձնական տեսանելի բովանդակություն և թույլ է տալիս բովանդակության անկախ և սինքրոն դիտումը և տարածումը. համացանցում վեբ-հոսթինգ հարթակների տրամադրում չբեռնվող խաղային ծրագրերի համար. երաժշտության, ճայնա- և տեսաբովանդակության ներբեռնումը համացանց երրորդ անձանց համար. համակարգչային ծրագրերի օգնությամբ ծառայությունների տրամադրում, մասնավորապես՝ անլար համացանցով, համացանցում որոնման ծառայություններ, անլար կապով հավատարիմ բաժանորդների պահանջները վերահսկելու, վերլուծելու և հաղորդելու ծառայություններ երրորդ անձանց վեբ-կայքերի համար՝ օգտատերերի անհատական շահերին ուղղված հետազա նպատակային գովազդի համար. համակարգչային ծրագրեր և ծրագրային հարթակներ թվային գովազդատերերի և հրատարակիչների համար ապրանքանիշը գովազդելու նպատակով. թվային գովազդատերերի և հրատարակիչների կողմից օգտագործվող համակարգչային ծրագրեր թվային գովազդների տեղադրման, թվային գովազդային գործառնությունների կառավարման, գովազդային արտահայտությունների օպտիմալացման, օգտատերերի գովազդի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, գովազդային միջոցառումների վերահսկման, վերլուծության և հաղորդման, գովազդային սարքավորումների կառավարման, գովազդատերերի և հրատարակիչների ընտրության, գովազդային աճուրդների և փոխանակումների մասնակցության, և գովազդի գնման և վաճառքի

նպատակներով համակարգչային ծրագրեր.

դաս 43. մարզահամալիրների ծառայություններ, մասնավորապես՝ հատուկ նպատակով տարածքների տրամադրում սպորտի, համերգների, ժողովների և ցուցահանդեսների համար.

դաս 45. համակարգիչների և համակարգչային ցանցի անվտանգության ծառայություններ. համակարգիչների, վեբ-կայքերի, համակարգչային ցանցերի և կապի ցանցերի համակարգերի վերահսկում անվտանգության նպատակներով. օգտատերերի նույնականացման ծառայությունների տրամադրում անվտանգության նպատակներով. անվտանգության նպատակներով անձնական վավերացված տեղեկատվության մասին ամպային հիմքով նույնականացման տրամադրում. երրորդ անձանց համար թվային վկայագրերի և գրանցված այլ գաղտնի տվյալների կառավարման և հրապարակման համակարգչային անվտանգության ծառայություններ. ավտոմեքենաների կառավարման միջոցով անվտանգության նպատակով ավտոմեքենաների հավաքակայանների վերահսկում. համացանցի և համակարգչային ցանցի անվտանգության վերաբերյալ տեղեկատվության տրամադրում. խորհրդատվություն տվյալների և նույնականացման տվյալների գոլոթյան բնագավառում. խորհրդատվություն համակարգչի, ցանցի և տվյալների անձեռնամխելիության և անվտանգության բնագավառում. ապօրինի ֆայլերի տարածումը կանխարգելելու նպատակով առցանց հսկում և համաշխարհային ցանցի հետ կապված ապօրինի ֆայլերի տարածման փորձ կատարելու վերաբերյալ էլեկտրոնային հաղորդագրությունների տրամադրում. անվտանգության բնագավառի տեղեկատվություն պարունակող վեբ-կայքերի տրամադրում. խորհրդատվություն անվտանգության հարցերով. անվտանգության ծառայություններ, մասնավորապես՝ առևտրային ձեռնարկությունների և կառավարության գրասենյակների անվտանգության գնահատում. սոցիալական ցանցերի առցանց ծառայություններ. ճանապարհային վթարների շտապ օգնության ծառայություններ, մասնավորապես՝ փականքների, բլոկա-

վորվածքների բացում. գողացած տրանսպորտային միջոցների վերականգնման ծառայություններ. շտապ վերահսկման ծառայություններ, մասնավորապես՝ տրանսպորտային էլեկտրոնային սարքերի վերահսկում հեռակառավարման զանգերի կենտրոնի միջոցով և աղետի, ավտովթարի հայտնաբերման ժամանակ շտապ օգնության անձնակազմի կարգավարման (դիսպետչերացման) կազմակերպում. վթարային ազդանշանների շտապ պատասխանի ծառայության վերահսկում, մասնավորապես՝ հեռակառավարման զանգերի կենտրոնի վերահսկման միջոցով ազդանշանային սարքերի վերահսկում հանրային առողջապահության և անվտանգության ծառայությունների շտապ կարգավորում և երրորդ անձանց տեղեկացում, մասնավորապես՝ ընտանիքի անդամներին, շտապ օգնության անձնակազմին, կամ բուժքրոջը. գողացած տրանսպորտային միջոցների հետախուզում:

(740) Արարատ Գալոյան

(210) 20160978

(111) 25991

(220) 28.07.2016

(151) 12.06.2017

(181) 28.07.2026

(730) ԴՆ Կոկա-Կոլա Քամփնի, Դելավեր նահանգի կորպորացիա, US

(442) 16.08.2016

(540)

Փալփի

(511)

դաս 32. գարեջուր. հանքային և գազավորված ջրեր և այլ ոչ ալկոհոլային ըմպելիքներ. մրգային ըմպելիքներ և մրգահյութեր. օշարակներ և ըմպելիքների պատրաստման այլ բաղադրանյութեր:

(740) Անգելինա Նահապետյան

(210) 20160980

(111) 25992

(220) 28.07.2016

(151) 12.06.2017

(181) 28.07.2026

(730) Դը Կոկա-Կոլա Քամփնի, Դելավեր
Նահանգի կորպորացիա, US
(442) 16.08.2016
(540)

ПАЛПИ

(511)

դաս 32. գարեջուր. հանքային և գազավորված ջրեր և այլ ոչ ալկոհոլային ըմպելիքներ. մրգային ըմպելիքներ և մրգահյութեր. օշարակներ և ըմպելիքների պատրաստման այլ բաղադրանյութեր:

(740) Անգելինա Նահապետյան

(210) 20160991 (111) 25993
(220) 02.08.2016 (151) 12.06.2017
(181) 02.08.2026

(730) Կարինե Գվիդոնի Ղազարյան, Երևան,
Կորյունի փ., տուն 23/16, AM

(442) 01.09.2016

(540)

GSHOP

(511)

դաս 39. տրանսպորտային փոխադրումներ. ապրանքների փաթեթավորում և պահպանում. ճանապարհորդությունների կազմակերպում:

(210) 20161010 (111) 25994
(220) 05.08.2016 (151) 12.06.2017
(181) 05.08.2026

(730) Ամուսթ ԷսէյՕուՍի, OM

(442) 01.11.2016

(310) UK00003173610 (320) 08.07.2016 (330) GB
(540)

BEACH HUT

(511)

դաս 3. ոչ բուժական օճառներ. օճառնեղիքային իրեր (պարֆյումերիա). օճառնեղիք. հոտավետ նյութեր. եթերային յուղեր. ոչ բուժական կոսմետիկական միջոցներ.

ոչ բուժական լոսյոններ մազերի համար. պատրաստուկներ մազերի և մաշկի խնամքի համար. կրեմներ և լոսյոններ մարմնի և դեմքի համար. դիմափոշի. պատրաստուկներ լոգարանում և ցնցուղարանում օգտագործելու համար. հոտազերծիչներ:

(740) Արարատ Գալոյան

(210) 20161055 (111) 25995
(220) 18.08.2016 (151) 12.06.2017
(181) 18.08.2026

(730) Ամուսթ ԷսէյՕուՍի, OM

(442) 01.11.2016

(310) UK00003180304 (320) 15.08.2016 (330) GB
(540)

BLOSSOM LOVE

(511)

դաս 3. ոչ բուժական օճառներ. օճառնեղիքային իրեր (պարֆյումերիա). օճառնեղիք. հոտավետ նյութեր. եթերային յուղեր. ոչ բուժական կոսմետիկական միջոցներ. ոչ բուժական լոսյոններ մազերի համար. պատրաստուկներ մազերի և մաշկի խնամքի համար. կրեմներ և լոսյոններ մարմնի և դեմքի համար. դիմափոշի. պատրաստուկներ լոգարանում և ցնցուղարանում օգտագործելու համար. հոտազերծիչներ:

(740) Արարատ Գալոյան

(210) 20161063 (111) 25996
(220) 19.08.2016 (151) 12.06.2017
(181) 19.08.2026

(730) Ամուսթ ԷսէյՕուՍի, OM

(442) 01.11.2016

(310) UK00003173609 (320) 08.07.2016 (330) GB
(540)

BRACKEN

(511)

դաս 3. ոչ բուժական օճառներ. օճառնեղիքային իրեր (պարֆյումերիա). օճառնեղիք. հոտավետ նյութեր. եթերային յուղեր. ոչ բուժական կոսմետիկական միջոցներ.

ոչ բուժական լույսոններ մազերի համար. պատրաստուկներ մազերի և մաշկի խնամքի համար. կրեմներ և լույսոններ մարմնի և դեմքի համար. դիմափոշի. պատրաստուկներ լոգարանում և ցնցուղարանում օգտագործելու համար. հոտազերծիչներ:

(740) Արարատ Գալոյան

(210) 20161094 (111) 25997
(220) 26.08.2016 (151) 12.06.2017
(181) 26.08.2026

(730) «Ատլանտիս յուրոփիան էյրվեյզ» ՍՊԸ,
Երևան, Սայաթ-Նովա 29, AM
(442) 16.09.2016
(540)



(526) «REISEBUERO» բառն ինքնուրույն պահպանության օբյեկտ է:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է մուգ կապույտ գունային համակցությամբ:

(511)

դաս 39. տրանսպորտ (փոխադրումներ), ավիատոմսերի վաճառք:

(210) 20161095 (111) 25998
(220) 26.08.2016 (151) 12.06.2017
(181) 26.08.2026

(730) «Ատլանտիս յուրոփիան էյրվեյզ» ՍՊԸ,
Երևան, Սայաթ-Նովա 29, AM
(442) 16.09.2016
(540)



(526) «TOUR» և «.CZ» գրառումներն ինքնուրույն պահպանության օբյեկտներ են:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է մուգ կապույտ գույնով:

(511)

դաս 39. տրանսպորտ (փոխադրումներ), ավիատոմսերի վաճառք:

(210) 20161096 (111) 25999
(220) 26.08.2016 (151) 12.06.2017
(181) 26.08.2026

(730) «Ատլանտիս յուրոփիան էյրվեյզ» ՍՊԸ,
Երևան, Սայաթ-Նովա 29, AM
(442) 16.09.2016
(540)



(526) «INVESTMENT» բառն ինքնուրույն պահպանության օբյեկտ է:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է մուգ կապույտ գույնով:

(511)

դաս 39. տրանսպորտ (փոխադրումներ), ավիատոմսերի վաճառք:

(210) 20161097 (111) 26000
(220) 26.08.2016 (151) 12.06.2017
(181) 26.08.2026

(730) «Ատլանտիս յուրոփիան էյրվեյզ» ՍՊԸ,
Երևան, Սայաթ-Նովա 29, AM
(442) 16.09.2016
(540)



(526) «HOLDING» բառն ինքնուրույն պահպանության օբյեկտ է:

